

Կ Ա Ր Գ

«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ 6.1-ԻՆ ՀՈԴՎԱԾՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-ին հոդվածով սահմանված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրության չափորոշիչները, որոնց կողմից ներդրումային ծրագրերի շրջանակներում, 300 մլն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում՝ սահմանված կարգով մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը կարող է հետաձգվել երեք տարի ժամկետով:

2. Հետաձգման թույլտվություն ստանալու համար ներմուծող կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ է ներկայացնում դիմում՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծումից առնվազն մեկ ամիս առաջ:

3. Դիմումին կից ներկայացվում են՝

1) ներդրումային ծրագիր, որը պետք է պարունակի՝

ա. դիմող կազմակերպության և ծրագրի մասին տեղեկություններ,

բ. անձնակազմի մասնագիտացվածության, առկա և սպասվող աշխատատեղերի, առկա և սպասվող միջին աշխատավարձերի մասին տեղեկություններ,

գ. արտադրական տեխնոլոգիաների, հնարավոր նորարարական տեխնոլոգիաների, հումքի մատակարարման, այլ կազմակերպությունների հետ համագործակցության և ծրագրի՝ տեխնիկապես իրականացվելիքի մասին տեղեկություններ,

դ. իրացման կազմակերպման, առկա և կանխատեսվող իրացման ծավալների, մարքեթինգային քաղաքականության, արտաքին և ներքին շուկաների ծավալների, մրցակցային առավելությունների, գործընկերների մասին տեղեկություններ,

ե. վճարված հարկերի, պարտադիր վճարների, գերավճարների և պարտքային պարտավորությունների մասին տեղեկություններ,

զ. առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների հետ համագործակցության մասին տեղեկություններ,

է. իր հայեցողությամբ՝ ծրագրին վերաբերող յուրահատուկ անհրաժեշտ այլ տեղեկություններ.

2) տեղեկատվություն՝ լրացված և հաստատված կազմակերպության տնօրենի (անհատ ձեռնարկատիրոջ) կամ նրանց լիազորած անձանց կողմից՝ համաձայն ձևի.

3) նախորդ տարվա համար անկախ աուդիտի եզրակացություն (ցանկալի է, որ աուդիտ իրականացնող կազմակերպությունն ունենա միջազգային որակավորում):

4. Դիմումը Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ մուտքագրման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ, ուղարկվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն՝ եզրակացության, և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ կարծիքի:

5. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն հանձնարարականն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում են ներկայացված դիմումը և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն են ներկայացնում կարծիք՝ կցելով ծրագրի վերաբերյալ սույն կարգի 6-րդ կետով սահմանված չափորոշիչների գնահատականները:

6. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ծրագիրը գնահատում են համաձայն ներդրումային ծրագրի գնահատման հետևյալ չափորոշիչների`

- 1) իրատեսականություն և հեռանկարայնություն (5).
- 2) ռիսկայնության աստիճան (3).
- 3) տնտեսության վրա մուլտիպլիկատիվ ազդեցություն (5).
- 4) անձնակազմի մասնագիտական որակավորում (2).
- 5) զբաղվածության ընդլայնում (7).
- 6) նորարարություն և մրցակցային առավելություն (3).
- 7) արտահանման խթանում և (կամ) ներմուծման փոխարինում (7).
- 8) պատշաճ մարքեթինգային քաղաքականություն (7).
- 9) բարեխիղճ վարկային պատմություն և պարտքային պարտավորությունների պարտաճանաչ կատարում (5).
- 10) կազմակերպության գործունեության հաջողված պատմություն (2).
- 11) համաֆինանսավորման առկայություն (սեփականատիրոջ մասնակցությունը նախագծին` 50 և ավելի տոկոսով) (4):

7. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը 5-օրյա ժամկետում պատրաստում է իր եզրակացությունը` ամփոփելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարծիքներն ու ծրագրի գնահատման արդյունքները:

8. Ծրագրի գնահատման արդյունքներն ամփոփվում են` հաշվի առնելով յուրաքանչյուր չափորոշիչի միջին թվաբանական արդյունքը:

9. Ամփոփման արդյունքում 26 և ավելի միավոր ստացած ծրագրերի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, իսկ դրանից պակասի վերաբերյալ` բացասական

եզրակացություն:

10. Դրական կամ բացասական եզրակացության դեպքում Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը պատրաստում է Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման նախագիծ և այն սահմանված կարգով ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմ:

11. Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումն ուժի մեջ մտնելու պահից 5-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարությունը դրա մասին տեղեկացնում է ներմուծող կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն՝

ԼՐԱՑՎԱԾ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ (ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ) ԿԱՄ ՆՐԱՆՑ
ԼԻԱԶՈՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ

NN ը/կ	ԱՏԳ ԱԱ-ի ծածկագիրը	Անվանումը	Մոդել ը	Չափի միավորը	Քանակ ը	Ծագման երկիրը	Արտահանման երկիրը	Արժեքը (դրամ)	Ներմուծման ժամկետը	
									տարի	կիսամյակ (եռամսյակ)